ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի առթիվ, արտասահմանյան զանազան երկրներից հրավիրված հայ պատգամավորներ այցելեցին Մայր Աթոռ։

Հյուրերը, Մայր Աթոռում իրենց աղոթքը և ուխտը կատարելուց հետո, բարձրացան Վեհարան և ստացան Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունները։

***

ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Վեհարանում տեղի ունեցավ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի հերթական նիստը Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և մասնակցությամբ Փարիզից ժամանած հայտնի ճարտարապետ և Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչ պր. Եդվարդ Ութուճյանի։

Ժողովի օրակարգն էր Ս. Գայանեի տաճարի նոր կառուցվող ավագ սեղանի նախագծի քննարկումը և Վեհարանի նոր շենքի վերանորոգության աշխատանքների ընթացքը։

***

ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեց Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Եփրեմ Պողոսյանը։

Վեհափառ Հայրապետը ընդունեց ուխտավոր հայ կաթոլիկ վարդապետին և նրա հետ զրույց ունեցավ։

***

ՄԱՅԻՍԻ 10-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեց Բեյրութից ժամանած ծանոթ երաժիշտ Համբարձում Պերպերյանը։

Հյուրը Մայր Տաճարում իր ուխտը կատարելուց հետո ընդունվեց Վեհափառ Հայրապետից։

***

ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Քրիստոսի Համբարձման տոնի առթիվ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Կոմիտասյան պատարագը երգվեց Հոգևոր Ճեմարանի սաների կողմից, ղեկավարությամբ Հակոբ սարկավագ Պողապալյանի։

***

ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Վեհարանում տրվեց ճաշկերույթ, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի առթիվ արտասահմանից ժամանած շուրջ 40 հայ հյուրերի պատվին։

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը։

Ընդունելության ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի Հայկական ընկերության նախագահ տիկին Բերսաբե Գրիգորյանը։

Ընդունելության ընթացքում հայրենասիրական ջերմ և եկեղեցաշեն ելույթներ ունեցան ճարտապարետ պր. Եդվարդ Ութուճյանը (Փարիզից), պր. Համբարձում Պերպերյանը (Բեյրութից), պր. Զատիկ Խանզադյանը և Թորոսյան քույրերը (Փարիզից), տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյանները (Հալեպից), տիկին Մեխիա Ռամոսը (Արգենտինայից), պր. Արամ Տեյիրմենճյանը (Բուենոս-Այրեսից), պր. Արշավիր Քաղցրունին (ԱՄՆ-ից) պր. Բենիամին Թյուֆենկճյանը (Սոֆիայից), Հ. Եփրեմ Պողոսյանը (Վիեննայից), պր. Զիկ Դամատյանը (Բուխարեստից), որոնք միաժամանակ ծանրացան Ազգիս Վեհափառ Հայրապետի եկեղեցաշեն գործունեության և Մայր Աթոռի ու Հայ Եկեղեցու պատմական պառաքելության վրա նաև մեր օրերին։

Վեհափառ Հայրապետը բաժակ բարձրացրեց Մայր Աթոռի հավերժության, Մայր Հայրենիքի պայծառ ապագայի և հայ ժողովրդի միության, բարօրության և աշխարհի խաղաղության համար, և ի դեմս Սփյուռքի ներկայացուցիչների, օրհնեց Ազգն ու Եկեղեցին։

Հյուրերին ջերմ, սրտառուչ խոսքերով ողջունեցին նաև Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի Հայկական ընկերության նախագահ տիկին Բ. Գրիգորյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նախագահ ճարտարապետ Մ. Մազմանյանը։

Վեհարանում կայացած այս անմոռանալի ընդունելությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

***

ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էին մեծ թվով սփյուռքահայ ուխտավորներ։

Հավարտ սուրբ պատարագի տեղի ունեցավ Հոգեհանգստյան պաշտոն Լոնդոնից ուխտավորաբար Մայր Հայրենիքում գտնվող անվանի ջութակահար Մանուկ Բարիքյանի ծնողների՝ Ստեփանի և Վանուհիի հոգիների խաղաղության համար։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՅԻՍԻ 15-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսուցչական և ուսանողական կազմը, երեկոյան ժամը 8—10, Երևանի Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում ներկա գտնվեցին Լոնդոնից ժամանած հայտնի ջութակահար Մանուկ Բարիքյանի համերգին, Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի ընկերակցությամբ։

***

ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ վերադարձան բարեշնորհ Կարապետ սարկավագ Բենլիյանը և բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանը, որոնք վեց ամսից ի վեր սովորում էին Զագորսկի ռուսական հոգևոր ճեմարանում։

***

ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ, ՇԱԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմի մասնակցությամբ, այցելեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասնամյա հոբելյանի առթիվ Երևանում բացված արդյունաբերական և գյուղատնտեսական ցուցահանդեսը։

***

ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամը 8-ին, Հոգևոր Ճեմարանի դահլիճն էին հավաքվել Մայր Աթոռի միաբանությունն ու աշակերտությունը, ունկնդրելու համար Զագորսկից վերադարձած Պետրոս և Կարապետ սարկավագների տպավորություններն ու հուշերը։

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Հոգեգալստյան (Պենտեկոստեի) տոնի առթիվ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում սկսվեցին 1960—1961 ուսումնական տարվա ամավերջի քննությունները, որոնք կտևեն մինչև հունիսի 17-ը։